ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բանավոր խոսքի զարգացումը դադարներով ընթերցանության մեթոդով

Անցկացման վայրը՝ Մարտունու Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Գայանե Թադևոսյան

Դպրոց՝ Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական դպրոց

Մարտունի

2022

Բովանդակություն

1. Ներածություն.....2
2. Գրական ակնարկ.....4
3. Փորձարարական դաս.....10
3.1 Խմբի նկարագիրը.....10
3.2 Փորձարարական դաս 1.....11
3.3 Փորձարարական դաս 2.....12
4. Եզրակացություն.....13
5. Գրկանության ցանկ.....14
6. Հավելված 1.....15
7. Հավելված 2.....16

1. Ներածություն

Երեխայի բանավոր խոսքի զարգացումը տարրական դասարաններում մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Բանավոր խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում կրտսեր դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը: Բանավոր խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն զրույցները: Երեխաների դպրոց գալու առաջին իսկ օրից սկսած ուսուցիչը նրանց հետ զրուցելու բազմաթիվ առիթներ է ունենում:Սկզբնական շրջանում այդ զրույցը կարող է պարզ հարց ու պատասխանի բնույթ կրել, իսկ հետագայում աշակերտների գիտելիքների ընդարձակմանը և բառապաշարի հարստացմանը զուգընթաց, այն կարող է աստիճանաբար վերածվել ակտիվ, երկկողմյան զրույցի:: Ուսուցչի խոսքի վարպետությունը միշտ էլ կարևոր պայման է հանդիսացել դասն առավել ընկալելի դարձնելու համար:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակի թելադրանքով՝ ուսուցման առանձնահատուկ մոտեցում, ուշադրություն է պահանջում յուրաքանչյուր թևավոր միտք, յուրաքանչյուր լեզվական միավոր, որը զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, հարստացնում լեզուն, խոսքը, բառապաշարը, և հարկ է, որ այն ուսուցանվի հավուր պատշաճի:Խոսքային մեթոդները կարևոր են դասի ընթացքի և թեման ավելի արդյունավետ յուրացնելու համար:Առաջարկվող մեթոդները, անշուշտ, բազմազան են, սակայն ուսուցիչը նախ պետք է քաջատեղյակ լինի հաղորդման մեթոդերին, տիրապետի դրանց գործադրմանը: Այստեղ կարևորվում է նաև մեթոդի ճիշտ ընտրությունը, նրա տեղին ու արդյունավետ կիրառումը:Աշխատանքում ներկայացրել եմ կրտսեր դպրոցականների խոսքի զարգացումը դադարներով ընթերցանության մեթոդի միջոցով:«Դադարներով

ընթերցա-նության» մեթոդը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ: Մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս՝ մտքում ծանրութեթև անելու, իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու, շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով:Մեթոդը հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով::Մեկնաբանելով ընթերցանության մեթոդապես ճիշտ կազմակերպման համար կարևոր է ուսուցչի կողմից ընթերցվելիք ստեղծագործության տրամաբանական հատվածների և հենակետային մտքերի որոշումն ու նրանց շուրջ իրականացվող աշխատանքի բովանդակության նախագծումը . ինչպիսի հատվածների պետք է բաժանել ստեղծագործությունը,ո՞ր հենակետային մտքերը պետք է դիտարկել ,ի՞նչ հարցեր պետք է առաջադրվեն աշակերտներին,ո՞ր բառերը,արտահայտություններն են օգնում բացահայտել հիմնական միտքը,ենթատեքստը,որ մտքերն են են լուծելու դաստիարակչական խնդիրներ և այլն:

Նպատակը՝

- Դադարներով ընթերցանության մեթոդի միջոցով զարգացնել,բանավոր խոսքը կրտսեր դասարաններում

Խնդիրները՝

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման մակարդակը,բանավոր խոսքում առաջ եկած դժվարությունները:

- Ներկայացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները

2.Գրական ակնարկ

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատված մարդու խոսքի զարգացման փուլերից մեկը դա կրտսեր դպրոցական տարիքն է (7-ից մինչև 10 տարեկան)՝ Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու

տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային,բարբառային, մակաբույծ բառերից՝ բացատրելով, որ «ամեն մի ավելորդ բառ մոտավորապես նույնն է, ինչ դերասանի համար ավելորդ շարժումը, երաժշտի համար՝ ավելորդ ձայնը, հնչյունը, նկարչի համար ավելորդ գույնն ու վրձնահարվածը» :Այս խնդիրները լուծելու մեթոդական հիմնական բազա կարող են հանդիսանալ լեզվաբանական,հոգեբանական և մանկավարժական տեսությունները: Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով նաև գիտության և պրակտիկայի կապը:Մենք ապրում ենք բնության ու մարդու արարած զարմանահրաշ աշխարհում, որը փորձում ենք ճանաչել, գնահատել, պահպանել, զարգացնել: Մենք խոսում ենք աշխարհի և աշխարհում կատարված ու կատարվող երևույթների մասին, և խոսքով ներկայացնում ենք՝ ո՞վ է նա, ի՞նչ է սա, ինչպիսի՞ն է այն ևայլն: Մարդուն հետաքրքրում է, և նա խոսում է նաև այն մասին, թե ի՞նչ և ինչպե՞ս են այդ անում, ի՞նչ է կատարվում, ինչու՞է կատարվում, ինչպե՞ս է կատարվում և այլն: Այս ամենն էլ կազմում է մեր խոսքի բավանդակությունը:Այսօր գերակա խնդիր է դարձել սովորել սովորեցնելը: Տարրական դպրոցը եռաստիճան հանրակրթական դպրոցի առաջին աստիճանը լինելով՝ սովորողների հետագա զարգացման և հետագա ուսումնառության համար բացառիկ դեր ունի, և ծրագրերով նախատեսված գիտելիքներն ու կարողությունները դիտվում են որպես հանրակրթական պատրաստվածության անհրաժեշտ բաղադրիչ:Տարրական դպրոցում ուսուցումը պետք է նպաստի սովորողների ուսումնական գործունեության հմտությունների պատրաստմանը, նրանց ճիշտ աշխարհայացքի ձևավորմանը, օժանդակ անձի համակողմանի զարգացմանը և դաստիարակմանը: Տարրականն կրթությունը հանրակրթության հիմքն է: Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին:Աշակերտները պետք է հասկանան, որ

միալար ու անկենդան խոսքը, որը չունի զգացմունքային տարրեր, արտահայտիչ չէ, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար: Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտ ված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթեր ցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ:Աշակերտների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև ընդօրինակման և ստեղծագործական բնույթի արտագրությունները, շուտասելուկների, ուղղախոսության կանոնների ճիշտ կիրառմամբ բառախաղերի արտասանությունը, ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ կարծիքների և տպավո րությունների փոխանակումը, հիշողությամբ կամ նկարով պատմելը, նյութի վերարտադրելը նույնությամբ կամ ստեղծագործաբար: Բանավոր խոսքի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի առաջադրված նյութի անգիր անելը: Բանաստեղծություններ ու գեղարվեստական արձակ հատվածներ անգիր անելը մեծապես նպաստում է տվյալ նյութի բովանդակության խոր ընկալմանը, այդ բովանդակությունն արտահայտող բառերի ու արտահայտությունների յուրացմանը, շատ բանով օգնում է նաև խոսքի տոնի և տեմպի մշակմանը: Անգիր անելը,սակայն, աշակերտների բանավոր խոսքը կզարգացնի միայն այն դեպքում, երբ աշակերտները գիտեն բնագիրը շատ լավ կարդալ, բառերը բացատրել, պատկերացնում են, թե ինչպես են կատարելու հանձնարարությունը, ինչպես են արտասանելու և այլն, որոնք իհարկե տեղի են ունենում ուսուցչի ուղղորդմամբ և օրինակով: Միայն այս դեպքում է, որ անգիրը կնպաստի աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը, նրա լեզուն կհարստացնի նոր բառերով ու դարձվածքներով, կբարձրացնի խոսքի կուլտուրան:Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստա կան տարբեր ստեղծագործությունների ընթերցումը, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարանում: «Գրքերի հետ երեխաների վճռորոշ հանդիպումը դպրոցական նստարանին է տեղի ունենում: Եթե այդ հանդիպումը ստեղծագոր ծական մթնոլորտում է ընթանում, ուր գլխավորը կյանքն է, ոչ թե անգիր անելը. ապա կարող է

կարդալու համն առնել»[1] Այս փուլում տեղի է ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը,ինքնագիտակցության զարգացումը: Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյական նորմերի մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:Այստեղ խիստ կարևորվում են աշակերտի սովորել սովորելու և հաղորդակցական կարողությունները: Պետք է նկատի ունենալ նաև, որ արդյունավետ հաղորդակցման կարողությունների նպատակով խոսքի զարգացումը միայն մայրենի դասերի համար ու դրանց միջոցով չէ, որ տեղի է ունենում:Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը՝ մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա, և մայրենի լեզուն՝ որպես կրթության լեզու:Խոսքի զարգացումը՝ ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը,պետք է լրացվի մեկ այլ խնդրով, ձևավորել այնպիսի անձ, որը տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան, այդ թվում՝ հաշվի առնելով իր մտահղացումը,հաղորդակցական նպատակը և այլն: Արդյունավետ հաղորդակցումը ենթադրում է ճիշտ, արդյունավետ ատեղին խոսք: Դեռևս Հին աշխարհի նշանավոր հռետորները կարևորել են տեղին խոսքը, այսինքն խոսքի համապատասխանությունն այն հանգամանքներին և իրավիճակին, որում այն արտասանվում է, և այն անձին, ում հասցեագրված է:Լեզուն և խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունք են: Նրանցում արտահայտվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ամենալայն իմաստով: Լեզուն և խոսքը ծագել ու զարգացել են մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

[1] . Ռոդարի Ջ.,Ստեղծագործական երևակայության քերականություն,Ե. 1995, 224 էջ

«Խոսքի զարգացումը, նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛քերականական կառուցվածքի և թե՛առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից »[2]:

Բանավոր խոսքն արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որը, ճիշտ է, ավելի մշակված, հղկված ու կատարյալ է, սակայն ինչպես որոշ մեթոդիստներ են ասում՝ մի տեսակ «արհեստական, ձեռքբերովի լեզու է» և մարդ այն տիրապետում է մեծ ջանքերի ու հետևողական աշխատանքի շնորհիվ:Սակայն նույնիսկ այդ դեպքում գրավոր խոսքի տիրապետման հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը, որովհետև այն հենվում է բանավոր խոսքի վրա: Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը ուշադրություն դարձնելիս պետք է շեշտը դնել հենց այս առանձնահատկությունների զարգացման վրա, զարգացնելով երեխայի ստեղծագործական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը:Այդ իսկ պատճառով տարրական դասարանների դասագրքերում շատ են հանդիպում «Հորինի՛ր պատմություն նկարի շուրջ»առաջադրանքները, որոնք զարգացնում են երեխայի խոսքը: Սրանց միջոցով ստուգվում է և՛ երեխաների տիրապետած, ճիշտ օգտագործված արտահայտչամիջոցները, և՛ ձևաբանականգիտելիքների մակարդակը, և՛ խոսքի ճկունությունը, և՛ ստեղծագործական մտածողությունը:«Այն երեխան, որի զարգացումը բռնի կերպով չի աղճատվել, մեծ մասամբ հինգ կամ վեց տարեկանում , արդեն իր մայրենի լեզվով խոսում է աշխույժ ու ճիշտ, սակայն մի մտածեք՝ ինչքա՞ն գիտելիքներ, զգացմունքներ, մտքեր, տրամաբանություն և նույնիսկ փիլիսոփայությունէ հարկավոր, որպեսզի կարելի լինի որևէ լեզվով խոսել այնպես, ինչպես իր մայրենի լեզվով խոսում է վեց կամ յոթ տարեկան ոչ հիմար երեխան» [3]

---

[2] (Ա. Գ. Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Եր. , « Լույս », 1973, էջ 75)
[3] Կ.Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., 1949, էջ 129-130:

Բանավոր խոսքի զարգացմանն է միտված նաև ընդհատումներով ընթերցանության մեթոդը:«Դադարներով ընթերցա-նության» մեթոդը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ: Մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս՝ մտքում ծանրութեթև անելու, իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու, շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով:

Այս կարողությունը, սակայն, հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է «Դադարներով ընթերցա-նության» մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով կամ մեկնաբանելով ,քննարկելով գործող անձանց վարքը,արդարացնելով կամ մեղադրելով նրանց,բառային աշխատանք կատարելով ,բառերի ուղղագրությունը բացատրելով,կետադրությունը մեկնաբանելով և այլն:Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակության հասկացմանը,կարդալու կարողության կատարելագործմանը,վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:Մեկնաբանելով ընթերցանության մեթոդապես ճիշտ կազմակերպման համար կարևոր է ուսուցչի կողմից ընթերցվելիք ստեղծագործության տրամաբանական հատվածների և հենակետային մտքերի որոշումն ու նրանց շուրջ իրականացվող աշխատանքի բովանդակության նախագծումը . ինչպիսի հատվածների պետք է բաժանել ստեղծագործությունը,ո՞ր հենակետային մտքերը պետք է դիտարկել ,ի՞նչ հարցեր պետք է առաջադրվեն աշակերտներին,ո՞ր բառերը,արտահայտություններն են օգնում բացահայտել հիմնական միտքը,ենթատեքստը,որ մտքերն են են լուծելու դաստիարակչական խնդիրներ և այլն:Մեկնաբանելով կամ դադարներով ընթերցանությունը մեծապես նպաստում է բնագրի բովանդակության մեջ

թափանցելուն,գործող անձանց և կերպարների էությունն ըմբռնելուն,ներկայացվող դեպքերի տրամաբանական և պատճառահետևանքայինկապերը հասկանալուն,գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն:Սրանք ընթերցողական կարողության հիմնական բնութագրիչներն են:Կարդալու բոլոր տեսակներն էլ նպաստում են ընթերցողական կարողության ձևավորմանն ու զարգացմանը,սակայն դադարներով ընթերցանությունն այդ խնդրում առավել լայն հնարավորություններ ունի:[4]

Ընդհատված ընթերցանության մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն:Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի: Յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը:Կարևոր է, թե որտեղ կընդհատվի տեքստը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ տեքստի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Կարևոր է նաև նախապես մտածել այն հարցերը, առաջադրանքները, որոնք պետք է տրվեն դադարների ժամանակ:

3.Փորձարարական հետազոտություն

3.1Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական դպրոցի 2-րդ դասարանում,քանի որ այդ դասարանի երեխաները արդեն սկսում են

[4] ,,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,,Ջ.Գյուլամիրյան,2018թ.

ծանոթանալ ժողովրդական բանահյուսությանը:Ժողովրդական բանահյուսությունը ձևավորվում է բանավոր խոսքի միջոցով: Երեխաները պետք է կարողանան բանավոր խոսքի միջոցով վեր հանել հեքիաթի,առածի ասացվածքի հիմնական գաղափարը:Այդ նպատակից ելնելով ցանկացել եմ զարգացնել թույլ առաջադիմություն ունեցող երեխաների բանավոր խոսքը:Այս դասարանում սովորում են քսան աշակերտներ՝տասներկու տղա և ութ աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Մայրենին այս դասարանում անցնում են ութ ժամով և դասացուցակում այն տեղադրված է առաջին և երկրորդ ժամերին:Այս դասարանում սովորողների մեծ մասը շատ լավ զարգացած բանավոր խոսք ունեն, իսկ որոշ աշակերտներ հետ են մնում ընդունակ աշակերտներից: Բանավոր խոսքի զարգացման նպատակով որոշեցի դադարներով ընթերցանության մեթոդի միջոցով ընթերցել մի քանի պատմվածքներ: Պատմվածքը բաժանեցինք երեք մասի: Դասարանում կարդացինք պատմվածքի առաջին մասը: Ընթերցելուց հետո սովորողներին տվեցի այդ հատվածին վերաբերող հարցեր, որով պարզեցի թե սովորողները որքանով են յուրացրել նյութը:

Հետո սովորողներին առաջարկեցի հորինել պատմվածքի շարունակության իրենց տարբե-րակները:Բոլորը հերթով սկսեցին պատմել իրենց հորինած շարունակությունները,սրանով կարողացա թույլ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել ստեղծագործելու և ստեղծագործածը բարձրաձայն ներկայացնելու նկատմամբ:Հաջորդ օրը սովորողներն անհամբերությամբ սպասում էին պատմվածքի հաջորդ հատվածի ընթերցմանը : Հաջորդ հատվածն ընթերցելուց հետո համեմատեցին իրենց հորինածի հետ:

Հատվածը քննարկելուց հետո այս անգամ շարունակությունը բանավոր հորինեցինք, որից հետո ընթերցեցինք պատմվածքի ավարտը:

Այնուհետև տվեցի պատմվածքի բովանդակությունից բխող հարցեր,թե ինչպես կվարվեին աշակերտները պատմվածքի այս կամ այն հերոսի իրավիճակում:Աշակերտները մեծ ոգևորությամբ սկսեցին հորինել և պատմել:Այսպիսով ես համոզվեցի, որ ընդհատումներով ընթերցանության մեթոդը լավ միջոց է երեխաների բանավոր խոսքը զարգացնելու համար:

3.2Փորձարարական դասեր

Փորձարարական դաս 1

Դասի թեման ՝ «Մատենադարան»

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Թեմայի ուսուցման ժամանակ օգտագործել եմ ԽԻԿ համակարգը:Խթանման փուլում կիրառեցի «մտագրոհ »մեթոդը պարզելու համար, թե ինչ գիտեն աշակերտները մատենադարանի վերաբերյալ: Գրատախտակին գրեցի Մատենադարան Երևան,ձեռագրեր,պատկերազարդ,նկարիչներ այնուհետև աշակերտներին առաջարկեցի գուշակել թե ինչի մասին է նյութը և գրել ենթադրություններ:Քանի որ անցած տարվա էքսկուրսիայից նրանք արդեն ծանոթ էին Մատենդարանին,կարողացան ճիշտ գուշակել և տեղեկություններ տալ Մատենադարանի վերաբերյալ:

Երկրորդ փուլում կիրառեցի «Դադարներով ընթերցանության մեթոդը » բնագիրը բաժանեցի երկու մասի:Յուրաքանչյուր հատված երկու անգամ լուռ և բարձրաձայն ընթերցեցին աշակերտները :Առաջին հատվածի բարձրաձայն ընթերցումից հետո առաջարկեցի պատասխանել հետևյալ հարցերին :

- Ի՞նչ եք հասկանում մատենադարան ասելով
- Հնում մարդիկ ինչի՞ վրա էին գրում
- Մարդիկ առաջ ինչպե՞ս էին անվանում գրքերը
- Որտե՞ղ է գտնվում մատենադարանը

Թույլ կարողությունն ունեցող երեխաները կարողացան պատասխանել հարցերին վերհիշելով էքսկուրսիան:

Երկրորդ հատվածի ընթերցումից հետո երեխաներին բաժանեցի հատվածին համապատասխան նկարներ և առաջարկեցի բանավոր նկարագրել նկարները,երեխաները մեծ ոգևորությամբ նկարագրեցին պատկերները:

Վերջում հանձնարարեցի գրատախտակի վրա գրված բառերով կազմել նախադասություններ

3.3 Փորձարարական դաս 2

Դասի թեման՝ «Պոչատ աղվեսը»

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Նոր նյութի հաղորդումը սկսեցի մտագրոհ մեթոդով,պարզելու համար արդյոք երեխաները ծանոթ են ժողովրդական բանահյուսությանը:Երեխաները սկսեցին հերթով մտաբերել ժողովրդական

բանահյուսության իրենց ծանոթ ճյուղերը:Հաջորդ փուլում առաջարկեցի կարդալ հեքիաթ:Հեքիաթը բաժանեցինք երեք մասի: Դասարանում կարդացինք հեքիաթի առաջին մասը: Ընթերցելուց հետո աշակերտներին տվեցի այդ հատվածին վերաբերող հարցեր, որով պարզեցի, թե աշակերտները որքանով են յուրացրել նյութը:

- Ձեր կարծիքով ճի՞շտ վարվեց պառավը երբ կտրեց աղվեսի պոչը:
- Ձեր կարծիքով կվերադարձնի պառավը աղվեսի պոչը:Ինչու՞:
- Դուք ինչպե՞ս կվարվեիք պառավի փոխարեն:

Հետո աշակերտներին առաջարկեցի հորինել հեքիաթի շարունակության իրենց տարբե-րակները:Աշակերտները թղթերի վրա գրեցին իրենց հորինած շարունակությունները ,այնուհետև սկսեցին բարձրաձայն կարդալ:Սրանով աշակերների մոտ փորձեցի զարգացնել ստեղծագործական մտածողությունը:Հաջորդ օրը սովորողներն անհամբերությամբ սպասում էին հեքիաթի հաջորդ հատվածի ընթերցմանը (կային սովորողներ, ովքեր տանը ամբողջությամբ կարդացել էին հեքիաթը): Հաջորդ հատվածն ընթերցելուց հետո համեմատեցին իրենց հորինածի հետ:

Հատվածը քննարկելուց հետո այս անգամ շարունակությունը բանավոր հորինեցինք, որից հետո ընթերցեցինք հեքիաթի ավարտը:

Վերջում հարցերի միջոցով ամփոփեցինք դասը

- Ձեզ դուր եկավ հեքիաթի ավարտը:
- Իսկ դուք այդքան կչարչարվեիք, որպեսզի ստանայիք այն ինչն ձեզ էր պատկանում

Վերջում հանձնարարեցի գրել մի նամակ պոչատ Աղվեսին

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել որ չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից ևեթ մշակել սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝ հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը: Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև քերականության և ուղղագրության ուսուցումը:Երեխաների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների ու ամբողջ մանկավարժական կոլեկտիվի հոգածության առարկան պետք է լինի: Սխալ խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ և ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է:Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու զարգացած լինելու հիմնական չափանիշներից է,ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը, որը պետք է զարգացնել՝ ելնելով սովորողի տարիքային առանձնահատկություններից:Իմ կատարած հետազոտությունից կարող եմ վստահ ասել,որ կրտսեր դպրոցական տարիքը հենց այն կարևոր ու առանցքային տարիքն է որի ժամանակ շատ մեծ ուշադրություն պիտի դարձվի խոսքի զարգացմանը:Հետազոտության ընթացքում կիրառեցի դադարներով ընթերցման մեթոդը ինչն իր դրական ազդեցությունն ունեցավ երեխաների մեջ ընթերցանության հանդեպ սեր առաջացնելու գործում,իսկ ընթերցանությունը բանավոր խոսքի հիմնքն է:

4.Գրականության ցանկ

1) Ռոդարի Ջ.,Ստեղծագործական երևակայության քերականություն,Ե. 1995, 224 էջ

2) Ս.Գ.Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Եր., « Լույս », 1973, էջ 75

3) Կ.Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., 1949, էջ 129-130:

4) ,,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,,Ջ.Գյուլամիրյան,2018թ.

5) Համացանց,դադարներով ընթեցանության մեթոդի մասին հոդվածներ

Հավելված 1

Դասապլան

Ուսուցիչ՝Գայանե Թադևոսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	06.09	Կիսամյակ	1	Դասարան	2
Թեմա՝	«Մատենադարան»						
Օգտագործվող նյութեր	• Մատենադարան պատկերող պաստառ • Ինքնակպչուն թղթեր • Մանրանկարիչների դիմանկարներ						
Դասի նպատակը՝	• Ձևավորել արտահայտիչ կարդալու կարողություն • Նկարի շուրջ ստեղծի կապակցված խոսք						

Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի է ունենում

Վերջնարդյունքները	• Աշակերտները կկարողանան արտահայտիչ կարդալ • Կարողանա մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը • Սեփական բառերով կկառուցեն նկարագրական բնույթի խոսք նյութի վերաբերյալ			
Գործողություններ ժամ,տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
Սկիզբ՝ 5 ր Ընթացք՝ 20ր	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Պատասխանում են հարցերին,փորձում են հորինելով շարունակել կիսատ կարդացած տեքստը,,	Ստուգում է տնային աշխատանքները. Բացատրում է անհասկանալի մասերը. Հարցերի միջոցով աշակերտների ն ներգրավում է դասապրոցեսի մեջ. Հանձնարարում է միմյանց	• Ինչ եք հասկանում մատենադարան ասելով • Հնում մարդիկ ինչի վրա էին գրում • Մարդիկ առաջ ինչպես	Զրույցի մեթոդ Ընդհատումներով ընթեցանության մեթոդ

Առաջադրանք-ների կատարում՝15ր	կատարում են վերլուծություններ: Կատարում են խմաբային առաջադրանքներ	շարունակելով կարդալ դասը.	էին անվանում գրքերը	
Տնային աշխատանք 3ր	Տեքստից դուրս գրել անծանոթ բառերը և կազմել բառակապակցություններ			

Փոխտնօրեն՝ Տիգրան Մնացականյան

Հավելված 2

Դասապլան

Ուսուցիչ՝Գայանե Թադևոսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	06.09	Կիսամյակ	1	Դասարան	2
Թեմա՝	«Պոչատ աղվեսը»						
Օգտագործվող նյութեր	• Հ.Թումանյանի նկարով պաստառ • Աղվեսի նկարով պաստառ						
Դասի նպատակը՝	• Կզարգացնեն տեքստը կարդալու կարողությունները • Ստեղծագործաբար կվերարտադրեն նկարի բովանդակությունը • Կխորացնեն նախադասության մասին ունեցած գիտելիքները						

Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի է ունենում

Վերջնարդյունքները	• Կարողանում են բացատրել տեքստի բովանդակությունը • Կարողանում են բնագրի նկարի բովանդակությունը ներկայացնել և համեմատել բնագրի հետ: • Բնագրից դուրս բերված անծանոթ բառերով նախադասություններ են կազմում

Գործողություններ ժամ,տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
Սկիզբ՝ 5 ր Ընթացք՝ 20ր Առաջադրանք-ների կատարում՝15ր	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Կարդում են դասը հատվածներով,պատասխանում են հարցերին,բացատրում են բառերը:Պատմում են բնագրին կից նկարի բովանդակությունը և համեմատում են բնագրի բով. հետ: Կազմում են բառեր նախադասություններ բնագրից դուրս բերված բառերով	Ստուգում է տնային աշխատանքները. Բացատրում է անհասկանալի մասերը. Փոքրիկ դասախոսություն է ունենում Հ. Թումանյանի ստեղծագործությունների մասին,ներկայացնում ժողովրդական բանահայուսության ճյուղերը:Բաժանում է դասը հատվածների:Հարցերի միջոցով օգնում է երեխաներին ամբողջովին ըմբռնել նոր նյութը:	Ձեր կարծիքով ճիշտ վարվեց պառավը: Դուք ինչպես կվարվեիք պառավի փոխարեն: Հ.Թումանյանի էլ որ հեքիաթին եք ծանոթ	Մտագրոհ, Ընդհատումներով ընթեցանության մեթոդ,համառոտ դասախոսություն
Տնային աշխատանք 3ր	Կարդալ վերարատադրել բնագիրը:			

Փոխտնօրեն՝ Տիգրան Մնացականյան